

ՄԿՐՏԻՁ ԿՈՐՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ՅԵՎ ՄԻՐՈ
ՅԵՐԳԵՐ



891.99
Գ-78

ՊԵՏՐՈՍ

19 NOV 20

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ

891.99

4.785

այ.

ԿՅԱՆՔԻ ՅԵՎ ՍԻՐՈ
ՅԵՐԳԵՐ

028
76

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏԶՐԱՏ

1937

24.03.2013

36568

Տեխ խմբագիր՝ Ա.Ն. Գասպարյան
Սրբադիր՝ Ա. Գասպարյան



865
37

Բ Ո Ղ Բ Ո Ջ

— Ա՛խ, վորքան ջինջ ե
Այս առավոտը,
Գարուն ե իջել,
Մաքուր ե ողբ:

Արևն ե վառել
Խարույկն իր պայծառ,
Ու անթիվ ծառեր
Ծաղկել են դարձյալ:

Ահա քեզ մի ծառ,
Նայիր այս ճյուղին,
Մի գիշեր անցավ,
Մի գիշեր ուղիղ:

Յերեկ նա անդոր
Մերկ եր ու խղճուկ,
Բայց նայիր այսօր,
Տես, վրձնց ե աճում:

Անցավ մի գիշեր,
Մի ցերեկ ուղիղ,

Անթիվ բողբոջներ
Ամրացան ճյուղին:

Մի բողբոջ վորպես՝
Նոր ու կենսառատ,
Հասակս առած,
Յեւած գորշ հյուղից,
Ամրանում եմ յես,
Նոր կյանքի ճյուղին:

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Արքայական պալատում խնճույք կար մի փառանեղ,
Հյուր եր այն ճոխ սեղանին նաև պոետն հանճարեղ:
Ու խնճույքի թեժ պահին, արքան գոռոզ ու փքուն
Ուղեց ցույց տալ հյուրերին լեզվի ուժը իր ճկուն:
Մահկանացու ու չնչին արքան վոսկու և գահի
Ուղեց խոցել այն հզոր խոսքի անմահ արքային,
Ուղեց խոցել այն հզոր խոսքի անմահ արարքին,
Վոր հեղնանքով եր նալում իր պալատին ու գահին:
— Պուշկին, արև արքայի հարցը լսիր դու ուշիմ,
Ասա, վորքան է հեռու բանաստեղծը... ապուշից...
Թնդաց պալատն աղմուկից, քրքիշ, ծիծաղ, հա...
հա... հի...

Ու ծիծաղի ծովի մեջ լողաց խոսքը արքայի:
Նա վեր կացավ ինքնազուսպ: Լոեց նվազը մի պահ,
Այստեղ խոցված մի պոետ, այնտեղ լպիրշ մի արքա,
Իսկ մեջտեղում մի սեղան, շուրջը դեմքեր բանասերի,
Վորոնք շղթա յեն գնում վեհ սլացքին իր հոգու:
— Ի՞նչ են ուզում իրենից սողուններն այս գորշ
կյանքի,
Վոր աիժանի յեն միայն նողկանքի ու դարշանքի:
Վոչինչ, կգա վախճանը, թե ձեր՝ և թե՝ պիղծ գահի,
Սակայն հիմա պետք է տալ պատասխանը արքայի:
— Պատասխանն իմ, ով արքա, լսեցք լուրջ և ուշիմ,
Մի սեղան է բաժանում բանաստեղծին... ապուշից:

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ազգի վիճակը ծանրացած սրտիդ,
Յեւ մարտնչում ե յերգերը շրթիդ,
Հոգով բոցաշունչ ե սրտով հրկեզ,
Նետվեցիր անվախ կյանքի ասպարեզ:

Տեսար աշխարհում յերկու հաղթ բանակ,
Հավերժ ախոյան կեցած դեմ-դեմի,
Տեսար վոր կյանքում չկա հաղթանակ,
Առանց պայքարի ու մարտնչումի:

Տեսար և հոգիդ խավաբից զատված,
Միացավ ճնշվող հզոր բանակին,
Այդ բանակն այսօր իսպառ ազատված,
Կոչում ե—հարգանք մեծ հիշատակիդ:

ԱՐԾԱԹԱՎԱՐՍ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Ո՛ր, նայեցեք այս խստաշունչ արծաթավարս
գեղեցկուհուն,
Զգեստներով արծաթագոծ, անձեռնագործ ու շողշողուն,

Իր փեշերի տակ ե առել հանդ ու արոտ,
ծիլ ու ցողուն

Ո՛ր, նայեցեք այս խստաշունչ, արծաթավարս
գեղեցկուհուն:

Գեղատեսիլ չորս քույրերից ամենից մեծն
ե հասակով,

Միշտ ճեմում ե հպարտորեն ադամանդ ե
վառ պսակով,

Արարատյան դաշտիցը լայն՝ մինչ սարերի
ծայրն յերկնահաս

Արծաթավարս այն գեղեցկուհին փռել ե իր
փեշերը խաս:

Ու հարադատ մի մոր նման և՛ սիրասուն,
և՛ կաթոգին,

Նստել ե նա ակոսներում մեր արտերի ու
հողերի,

Պաշտպանում ե մեր ծիլերին, հատիկներին
չար հողմերից,

Նա հարազատ մի մոր նման է՝ սիրասուն, է՝
կաթոգին:

Յերբ գիշերը թավիշ հագած մուժ բարձունքից
կախվում է ցած,
Ու գրկում է գեղեցկուհու իրանը նուրբ, կուրծքը
լուսե,
— Ել լինչ սիրտ ու հոգի չե պետք, վոր չմնա միշտ
հիացած,
— Ել լինչ գրչով [կարող է մարդ նրա սիրո յերգը
հյուսել:

Արծաթաթել վարսերը իր անփթորեն ուսով փռած,
Քայլում է նա թուխ հողերի ու արտերի լայնության
մեջ,
Կյանք է տալիս մեր ծիլերին նա իր ծոցի հրից
անշեջ,
Ու քայլում է արծաթաթել վարսերը իր ուսով փռած:
Ո՛ր, նայեցեք այս խստաշունչ արծաթավարս
գեղեցկուհուն,
Ձգեստներով արծաթագործ, անձեռնագործ ու
շողշողուն,
Իր փեշերի տակ է առել հանդ ու արոտ, ծիլ ու
ցողուն
Ո՛ր, նայեցեք այս խստաշունչ արծաթավարս
գեղեցկուհուն:

ԶՈՐԱՏԵՍԻ ՄԱՅԻՍ

Գործարանից հոյակամար, և դաշտերից համայնավար,
Մեր շարքերով բազմահազար, բազմալեզու,
բազմապիսի,
Շեկ պղնձի հանքահորի գորշ արգանդից չելած ահա
Դուրս ենք գալիս այսօր նորից բայշեկկյան
գորատեսի:
Համայնական մեր հանդերում, ուր Մայիսն է
ճառագայթել
Կյանք է առել մի նոր արշավ այդ դաշտերի
լայնության մեջ,
Լայնության մեջ այդ դաշտերի, ուր չերեկ մահն եր
գալարվում,
Այսօր միլիոն ու բյուրավոր սիրտ ու հոգի չեն
դալարում:
Դինամիտի ուժով անհաղթ ու զարկերով բյուր
ձեռների
Գետն է փոխում լայնայերախ ու դարավոր հունն իր
քարոտ,
Մինչդեռ յերեկ՝ սև ելին հագած արոտները մեր
անբերրին,
Այսօր ահա կյանքն է յերգում սրտում հազար յերգու
կարոտ:
Ահա ինչու հոյակամար հանքաշխարհից անդնդախոր
Մեր շարքերով բազմահազար, բազմալեզու,
բազմապիսի,
Շեկ պղնձի հանքահորի գորշ արգանդից չելած այսօր,
Դուրս ենք գալիս ահա նորից բայշեկկյան
գորատեսի:

ՆԵՐԲՈՂ ՀԵՐՈՍ ՈՂԱԶՈՒՆԵՐԻՆ

Մեր լեռներից ծաղկափեշ
Ջրվեժներից գահավեժ,
Մեր գետերից կարկաչուն
Ձեզ ջերմ համբույր ու վողջմունք

Յերբ են արդյոք ժպտացել
Այսքան ուրախ լեռ ու հանդ,
Յերբ ե յեղել աշխարհում
Մարդը այսչափ անկաշկանդ:

Ունեցել ե նա յերբեք
Հոգու թռիչք ու թևեր,
Յերբ ե հնչել, արդյոք յերբ,
Մարդ անունը այսչափ վեհ:

— Մահից թող նա յերկնչի,
Ով անդոր ե ու չնչին,
Ում վոր հոգու ընդերքում
Կյանքի տեղ մահն ե չերգում:

Ասացիք դուք, թուաք վեր,
Ձեր սրտում կյանքն եր դոփում
Ձեր թռիչքից անվեհեր
Մահն եր ահից սարսափում:

Կյանքն ե չերգում ձեր հոգում
Յեվ ձեր լեռուն արլան մեջ:

Ձեր կորովն ե բորբոքում
ԱՌԱՋՆՈՐԴԻ հուրն անշեջ:

Ահա, ահա թե ինչու
Ամենուրեք, ամենուր
Յեվ սարերի զով լանջում
Յեվ ծովերում կապտաշուր,
Յեվ գետերի յեղերքում
Յերկիրը ձեզ ե յերգում:

Մեր լեռներից ծաղկափեշ
Ջրվեժներից գահավեժ,
Մեր գետերից կարկաչուն
Ձեզ ջերմ համբույր ու վողջմունք:

Լ Ի Ր Ի Կ Ա

Կյանքը այնչափ խոր է ու լայն ինձ համար,
Պայքարների հուրն է կոփում իմ հոգին,
Ո՛ր, ինձ համար կյանքը սեր է ու պայքար,
Յեւլ ուժերի մի բաղխում է մոլեգին:

Այդ բաղխման մեջ ընկնում է հինը խարխուլ,
Այդ բաղխումով նորն է աճում ծիլ առ ծիլ,
Իմ հոգու մեջ նորն է հիմա բաբախում,
Բոլորի հետ և բոլորից առանձին:

Կյանքը մեզ միշտ դեպի առաջ է մղում,
Իսկ մենք կյանքի թափանիվն ենք շարժում հար,
Այդ բաբախման մեջ և փոխվում ենք, և փոխում,
Յեւլ թևում ենք առաջ անվերջ, անդադար:

ԱՐԹԻԿ ՏՈՒՖՈՒՄ

Յեւլ ամառ է և՛ կեսոր,
Յեւլ չերկինքն է ջինջ ու պարզ,
Յեւլ արեգակ հրավարս
Յեւլ կապտավուն հորիզոն:

Արեգակն է մաղում վար
Վոսկեփողի, վառ կրակ,
Կամքով լարված ու համառ
Ահա կովում են նրանք:

Ուշ գիշերից մինչև լույս
Թարմ ուժերով հերթ առ հերթ,
Բաց են անում նրբահյուս
Տուֆաշխարհը բազմաշերտ:

Փոխում են կյանքը անդուլ
Յեւլ կյանքի հետ փոխվում հար,
Նրանք ժիր ու յեռանդուն
Արևից ել արևվառ:

ԱՐԹԻԿ—ՏՈՒՖԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

Ձեր զարկերից մաշվում ե կոշտ վերմակը աչն,
Վոր թուխ շերտով մաքուր տուֆի կուրծքն ե պատում,
Ու բացվում ե տուֆաշխարը ե՛ խոր, ե՛ լայն:
Այս վարդազույն լեռների մեջ հերոսաբար,
Պայքարի յեք յեկել ահա լուրջ ու արթուն,
Այս լեռների գորշ փեշերից ամեն մի քար
Ունի հյուսված արիության մի պատմություն:
Մեր այս կյանքի ընթացքի հետ փոխվում եք հար,
Փոփոխելով կյանքն առաջ եք շարժում անդուլ,
Վոր յերկիրը մեր լուսակերտ ու լուսափայլ
Հաղթանակով դուրս գա վաղվա ահեղ մարտում:

ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1

Իջել եր մի լուսե իրիկուն,
Լույսերը ո՛ր, աչնքան պայծառ եյին,
Իմ հոգու հույզերը անծայր եյին,
Իմ հոգու հույզերը մրրկուն:

2

Մի փոքրիկ սենյակում լուսավոր
(Յերբ դրսում գիշերն եր թանձրացել),
Նստել եյին ընկերներն իմ բանվոր
Հսում եյին ինձ լարված ու անձեն:

Մենք նոր ելինք մեր գործից տուն դարձել
Շատերը հոգնած եյին ու քաղցած,
Յես խոսք եյի տվել՝ իմ գրած
«Շենքերի յերգերը» ընթերցել:

3

Կարդում եյի յես անզուսպ ու հուզված,
Թվում եր, թե սիրտս կ'թռչի,

Կարդում եյի քառյակները հյուսած
Իմ անվարժ ու դողդոջ գրիչի:

Կարդում եյի և դիտում եյի թագուն,
Այն լարված՝ ուշադիր դեմքերին,
Յեւ յարող հուզվերից մի ներքին
Իմ սիրտը դոփում եր ու թակում:

4

Կարդացի քառյակները իմ այն,
Մինչ վերջին տողերը միասին,
Նայեցի դեմքերին, կանգ առա
Սպասում եյի, ով ինչ կասի:

«Իհարկե քո յերգում շենքեր կան,
Բայց ուր են ձեռքերը մեր ձուլող,
Այս շենքը, վորի մեջ հիմա կանք,
Չէ՞ վոր սա չարձրացավ մրցումով:

Քո յերգած շենքերը ամուր են,
Ունեն մուտք, լուսամուտ ու ֆասադ,
Բայց ուր են հուշդերը մեր հստակ,
Կառուցման հուշդերը մեր ուր են:

5

«Շենքեր կան, շենքեր կան յերկնահաս,
Նյու—Յորքում, Լոնդոնում, Փարիզում,
Բայց վիրն ե մեր շենքը—դու պարզ ու
Անպաճույճ բառերով պետք ե տաս:

Մի գրիւր բառերով դու խրթին,
«Յեղիւր պարզ և թե խոր յերգերով,—
Վոր լինես և հատու և գերող,
Վոր մենք քեզ մոտ զգանք մեր սրտին»:

6

«Մենք անթիւ շենքեր ենք կառուցել
Կառուցել ենք շենքեր մեզ համար,
Մենք լարել ենք անթիւ միտք ու ձեռք,
Խոհեր ենք շալակել անհամար:

Ահա տես, մրցումով ենք գցում
Հիմքը այս կառուցվող նոր շենքի,
Մեր կյանքը տեմպերով ե լեցուն
Կարող ես, հասիւր մեզ և յերգիւր:

7

Լսեցի յես լարված, ուշադիր,
Լսեցի յես հուզված ու անձեն,
Ու սիրտս բաբախեց խոր վշտից
«Շատ բան կա, վոր դեռ չեմ իմացել»:

Ու շուրջս բերկրանքով մի փալկեց,
Իսկ խավարը հալվեց մտքիս դեմ,
Քիչ առաջ ուրիշ եյի յես այլ եյի,
Իսկ հիմա փոխվեցի յես արդեն:

8

«Այսպես ե մեր կյանքը, բարեկամ
Մեր կյանքը յերգ ե ու մարտնչում,

Այսօր դու ինչ վոր ես, ինչ վոր կաս
Վաղը դու փոխվում ես, ու աճում:

«Շուրջդ քեզ փոխում ե միշտ արագ
Շրջանում ուրիշ ես, դու նոր ես,
Իսկ շուրջդ պայքար ե ու կրակ
Խմբով քո ուժեղ ու հզոր ես:

9

Լսեցի յես լարված, ուշադիր
Պանգիս մեջ խոհեր եյին ծանրացել
Ու սիրտս խփում եր յեռանդից,
Իսկ յես լուռ լսում ելի դեռ անձեռն:

Հոգուս մեջ յեռանդ կար ու կորով,
Տեսնելու. լսելու անհուն տենչ,
Իմ ուղին Կժվում եր պարզորոշ՝
«Խորանալ, խորանալ կյանքի մեջ»:

10

Ու դրսում գիշերն եր կախվել լուռ,
Գիշերը անմարմին ու անձև,
Կախվել եր ու այնպես ծանրացել
Նա վորպես մի մրոտ վարագույր:

Հոգուս մեջ հուզում կար ահագին,
Ու անթիվ, անհամար նոր յերգեր—
Ո՛ր, վողջճւյն, վողջճւյն ձեզ, ընկերներ,
Հուսաշող, անթախիժ իմ կյանքի:

Լենինական Տերստի

ՍԵՎԱՆՍԱ ԼՃԻՆ

— Ի՞նչ կա քո մեջ այդքան գերող,
Յեվ անծանոթ, և՛ դուրսիչ,
Յեվ կապուտակ քո աչքերում
Յեվ հայացքում քո այդ ջինջ:

Դու դրավիչ և հիասքանչ,
Տարերքներով քո անեղձ,
Թեև միշտ հին ու հնացած,
Սակայն հավերժ նորաստեղծ:

Դո՛ւ այդ առատ հորդ ջրերի
Ուժը պիտի մենք խլենք,
Յեվ անսպառ այդ նոր ուժով
Հինը հիմքից խարխլենք:

Վոր նորակերտ ավաններին
Տաս նոր արև և նոր լույս,
Յեվ յերջանիկ սերունդները
Յերգեն յերգդ բազմահույզ:

Այսպես ես դու, դուրսիչ Սևան,
Տարերքներով քո անեղձ,
Թեև միշտ հին ու հնորյա,
Սակայն հավերժ նորաստեղծ:

Լ Ի Ր Ի Կ Ա

Մանիշակագուշն ջրերի գրկում
Սահում ե ահա նավակն իմ առաջ,
Շուրջս ջրերի տարերքն ե յերգում,
Շուրջս ջրերի ցնծագին շառաչ:

Նայում եմ ծովի ջրերին անտակ,
Այստեղ վորքան ուժ և հուր կա ներքին,
Ծով բազմաշառաչ, ծով բազմակոհակ
Մենք դուրս կկորզենք ուժը տարերքիդ:

Վոր նոր կյանք կերտենք մի արեազուն,
Ցամաքի վրա՝ այս գորշ հին հողի,
Վոր մեր մարդկային պերճախոս լեզուն
Քո հաղթահարված ուժը ներբողի:

Ով չքնաղ լճակ, տեսավ իմ հոգին
Ծփանքդ ահեղ և աղմկալի,
Տեսնում ե ահա և որդ գալիք,
Պարտված տարերքդ ուժով մոլորին:

ԱՄՊՆ ՈՒ ԱԼԻՔԸ

Վորպես մի մոլի տարված սիրահար
Ալիքն ու ամպը նայում են իրար:
Նայում են իրար ու չեն հագենում:
Ժամանակն այսպես գալիս ե, գնում,
Հին սերունդներն են գերեզման իջնում,
Յեվ սերունդները ծնվում են նորից,
Իսկ ամպ ու ալիք ծնված մի մորից
Յեվ վորպես տարված, մոլի սիրահար
Անվերջ ու անվերջ նայում են իրար:

ԾՈՎԱՓԻՆ

Ծովը հանդարտ ժայռոտ ափին ե զարկում,
Կոհակները փսփսում են ինչ վոր յերգ,
Վերջալույսն ծիրանաշաղ վերարկուն,
Նետեց ծովի մակերեսին անեղերք:

Ուսին ամպի ծվեն մի նուրը ու անբիծ,
Ծնվեց ծովից կիսալուսինը նազուկ,
Ու աստղերը չերկնի անհուն խորքերից,
Իջան ծովը աչիկներովը լազուր:

— Հենց նույն պահին մի խենթ ալիք ծովահույզ,
Պոկվեց ծովից, ընկավ ափին ու հանգավ.
— Ձե՞ վոր ծովում ունեք նա ուժ և թե հույզ,
Այժմ նայիր և անգոր ե և անկար:

Միթե մարդն ել մի ալիք չե՞ այս կյանքում,
Վոր անգոր ե համայնքից դուրս կյանքից զատ:
Նրանով ե մարդը հպարտ և կանգուն,
Վոր հենվում ե իր մայր հողին հարազատ:

— Վողջուն քեզ կյանք, քեզ կոլեկտիվ սիրաժան,
Վոր մեզ ուժ ես տալիս կրցքիցդ հարազատ.
— Վողջուն քեզ մարդ, վոր մայր հողից անբաժան
Կյանք ես կերտում և յերջանիկ և ազատ:

ՀԱՍԿԻ ԱՃՈՒՄԸ

Հասուն հասկերի շորորը հիմա
Ա՛յնպես անուշ ե, ա՛յնպես նազիկ,
Արեն ե բազմեղ սարերի վրա,
Բոց ճակատով իր վոսկեմազիկ:

Հոգիս տեսնում ե հասկի զորումը,
Հասկի զորումը արևազուն,
Վայրկյան առ վայրկյան հասկն
հզորում ե,
Ու փոփոխվելով դառնում հասուն:

Ահա նայիր դու հասկի ցողունին,
Վոսկի ցող ունի նա իր վրա,
Յերեկ սերմ եր նա, պառկած հողում մեր,
Այսօր նման չե սերմը նրան:

Այդ ի՞նչ, ի՞նչ ուժով սերմը ծիլ դարձավ,
Յեվ ծիլն իր մահով յերկնեց ցողուն,
Վոր համայնավար դաշտերը անծալր
Լողում են բերքի անծալր ծովում:

— Ո՛ր, անդուլ շարժման զորություն և ուժ,
Անշունչ հողումն ել կյանք ես ծնում,
Յեվ քո իմաստուն ելությամբ անուշ,
Հոգուս ամբարը յորգով լցնում:

ԱՄՌԱՆ ԱՌԱՎՈՏ

Ո՛վ դու ամուսն առավոտ, քեզ հաղար սեր ու
խնդում,

Միտդ հրկեզ, շունչդ տոթ, քեզ հաղար սեր ու
խնդում:

Ահա դաշտ եմ յեկել յես ու շրջում եմ հրճվանքով,
Հայն արտերում մեր շաղոտ, քեզ հաղար սեր ու
խնդում:

Համայնական դաշտերի կրծքի վրա հրավառ
Փռել ես բերքդ արևոտ, քեզ հաղար սեր ու խնդում:

Ահա հնձվորը արի, դեմքին հանուն մի հրճվանք,
Կանգնած հասուն արտի մոտ, քեզ հաղար սեր ու
խնդում:

Վողջճւյն, վողջճւյն քեզ հնձվոր, վոր տերն ես քո
վաստակի,

Մեր թշնամուն մահվան բոթ, քեզ հաղար սեր ու
խնդում:

ԱՄԱՌ

Ամեն տեղ հիմա քո շունչն ե փռել
Յեվ բարկ, և՛ այրող, և՛ անչափ համառ,
Իմ մեջ հուլողերի խարույկ ես վառել
Ո՛վ Արարատյան դաշտերի ամառ:

Մեր դեմ բացել ես յերգի ու բերքի
Թեժ ու հուրհրան վառ արգանդը քո,
Հանդը թնդում ե հնձվորի յերգից
Արարատյան ջերմ արևի ներքո:

Իրար են անցել ջահել ու անել,
Հանդը թնդում ե մեր բերքի յերգից,
Յես ինչպես հիմա իմ ճիչը պահեմ,
Յես ինչպես սանձեմ հրճվանքն իմ ներքին:

Յելած վշտերի անտակ զնգանից,
Քո գովքն ե յերգում նոր մարդը համառ,
Վողջճւյն մեր յերգի ու բերքի տոնին,
Ջան Արարատյան, դաշտերի ամառ:

ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՐԸ

(Շիրակի դաշտում կոմբայնների մոտ)

Շեկ թևերով շոգ ամառն ե նստել յերկրիս դաշտերին
Շուրջապարի յեն դաշտերն յելել արեգակի ներկի

տակ,

Դաշտի գրկում սեր ե յերգում հասկը իր ճոխ բերքի
տակ,

Հանդի սիրտը թունդ ե առել պողպատաթև վաշտերից:

Հասկը՝ դաշտի քաղաքացին վառ ծիրանի յե հագել
Այդ լինչ, այդ լինչ նոր արև ե մեր հանդերում

ճառագել,

— Դու յես ո՞ դու կոմբայն ընկեր, պատվավոր հյուր
մեր հանդի,

Յեկար խնդուն, վոր հնի հետ արխիվ նետենք

գերանդին:

ԱՄՌԱՆ ԱՐԵՎՆ ԻՐ ՊԱՅԾԱՌ ԱԼՄԱԶՈՎ

Ամռան արևն իր պայծառ ալմազով
Կիսեց գիշերվա խավարը մռայլ,
Հասուն հասկերի գեղեցիկ նազով
Նստեց ամառը դաշտերի վրա:

Ամռան որերը թափել են վոսկի,
Ջրանցքներն անուշ յերգեր են ասում,
Մեր արտը, արտը վոսկեփայլ հասկի,
Մեղմ որորվում ե իր բերքով հասուն:

Մեղմ որորվում ե իր բերքով հասուն,
Ցորենն ե ժպտում հայացքով լուսե,
Դեղին հասկերի բերքառատ լեզուն
Մեր հաղթանակի յերգերն ե հյուսել:

Յեվ սիրտն իմ, սիրտն իմ ինչպես չհուզվի
Այս ծովածավալ արտերի բերքից,
Առ իմ նոր յերգը քո բերքին հյուսիր,
Իմ ջահել, իմ վառ, իմ անուշ յերկիր:

ՍԵՐ ՅԵՎ ԿԱՐՈՏ

Ամեն վայրկյան ցանկանում եմ լինել քեզ մոտ,
Ո՛վ դու իմ ջերմ սիրո աղբյուր, ո՛վ դու իմ հույզ,
Լինել քեզ մոտ, նստել քեզ հետ մինչ առավոտ,
Ու պատմել քեզ գաղտնիքները ջահել հոգուս:

Ու պատմել քեզ, թե ինչպես ե հոգիս կիզում
Քո ջերմ սիրո արեգակը ե՛րբ, ե՛րբ խիստ...
Ու թե ինչպես սիրտն իմ սիրո յերգ ե հյուսում,
Յեվ ժամ առ ժամ հասունանում դալար հոգիս:

Ո՛վ իմ անգին, նայիր կյանքին մեր այս անուշ,
Տես որերը վոնց են հոսում ալիք-ալիք,
Մեր ներկան ե դառնում անցյալ պայծառ մի հուշ,
Թևատարած սլանում ենք դեպի գալիք:

Սլանում ենք, սակայն այս գոռ հողմերի մեջ,
Յերբ վայրկյանն իսկ մարտնչում ե ու նվաճում,
Իմ հոգու մեջ մի նոր սիրո յերգ ե հնչում
Կյանքի տված հնչյուններով վառ ու անշեջ:

Նա՛ այդ սերը ասում ե ինձ յեղիր տոկուն,
Յեղիր համառ, յեղիր արի ու աննահանջ,
Մեր իմաստուն սերունդների յերթի առաջ,
Միշտ վառ պահիր փարոսը քո կայտառ հոգու:

Յեվ ունկնդիր այդ նուրբ ձայնին արևահյուս,
Հոգիս աճեց, հզորացավ այս առավոտ.
Ո՛, վողջույն քեզ, հոգուս հոգի, հույզերիս հույզ,
Ո՛, վողջույն քեզ իմ ջերմ սիրո այրող կարոտ:

ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ

Յերեկ մանուկ եյիր անդոր,
Վաղքդ՝ թիթև, լացդ՝ ճիչ,
Այդ լինչ ուժով դու ախոր
Դարձար այդչափ հմայիչ:

Վճր, վճր արևը արդյոք
Տվեց քեզ շող ու համբույր,
Վոր դու դարձար այդքան շող,
Վորպես ամռանն այրող հուր:

ՈՐՈՐՈՑԻ ՄՈՏ

Արծաթ աստղերի լուսագեղ յերգով
Գիշերը կախեց փեշերն իր մըռտ:
Իսկ յես կանգնել եմ որորոցիդ մոտ,
Դիտում եմ, մանկիկ, խաղաղ նինջը քո:

Նինջը աղափուլ թևով սպիտակ
Նստել ե դեմքիդ քնքշագին նազով,
Որորում ե քեզ մեղմիկ յերազով,
Յեվ կյանքով լցնում հոգիդ անհատակ:

Խաղում ե հովը. որոցքդ ճոճում,
Իսկ դու քնի մեջ ժպտում ես խաղաղ,
Նինջը բերում ե քեզ կյանք ու աճում,
Մեր աստղերի տակ այս լուսածիծաղ:

ՈՐՈՐՈՑԻ ՄՈՏ

1

Արծաթ աստղերի լուսագեղ յերգով
Դիշերը կախեց փեշերն իր մրոտ:
Իսկ յես կանգնել եմ որորոցիդ մոտ,
Դիտում եմ մանկիկ խաղաղ նինջը քո:

Նինջը աղավնու թևով սպիտակ
Նստել ե դեմքիդ քնքշագին նազով,
Որորում ե քեզ մեղմիկ լերազով,
Ցեղ կյանքով լցնում հոգիդ անհատակ:

Խաղում ե հովը. որոցքդ ճոճում,
Իսկ դու քնի մեջ ժպտում ես խաղաղ
Նինջը բերում ե քեզ կյանք ու աճում,
Մեր աստղերի տակ այս լուսածիծաղ:

2

Որորոցիդ մոտ տատիկն ե ննջում,
Գունատ բիրերում կա մի փայլ վերջին,
Իսկ նինջը նրա հոգու ալանջին,
Անսիրտ խոսքերով մահ ե շշնջում...

Ավանդ, հենց վաղը գերեզմանոցում
Վեր կբարձրանա մի նոր շիրմաքար...

Իսկ դու իմ մանկիկ, նոր կյանքի ծոցում
Կաճես քո հոգով և կյանքով դալար:

Այդպես ե անխախտ որենքը կյանքի,
Մեկը գնում ե մյուսը գալիս,
Ով կյանք քո պայծառ արևից անդին
Ուժ ու կորով տուր իմ մատաղ բալիս:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ

ԿՈԼԽՈՋԻ ԱՂԶԻԿ

Կանգնել ես հսկաբա կոլխոզի արտում
Այտերդ, ձեռիդ հասկերի պես վառ,
Ու քո վառ սերն ե ծաղկել իմ սրտում,
Կոլխոզի աղջիկ աչերդ պայծառ:

Ձան ջահել աղջիկ, հաստատ ու համառ,
Վառ յերգեր եմ չես հյուսել քեզ համար:

Մեր ընթացքի հետ այս արագահոս
Անվախ քայլում ես դու մեզ հետ առաջ,
Դարձել ես մեր նոր որերի հերոս,
Կոլխոզի աղջիկ ե՛ր արի ե՛ր քաջ:

Ձան ջահել աղջիկ, հաստատ ու համառ,
Վառ յերգեր եմ չես հյուսել քեզ համար:

Մի անհուն սիրով չես քեզ սիրեցի,
Ծփան արտերի վոսկեվարս գրկում,
Անունդ այնպես պայծառ գրեցի,
Կոլխոզի աղջիկ, իմ սիրո գրքում:

Ձան ջահել աղջիկ, հաստատ ու համառ,
Վառ յերգեր եմ չես հյուսել քեզ համար:

ՀՆՁՎՈՐԻ ՍԵՐԸ

Զով քամու դեմ դեմքդ բացել
Հաց ես բերում հնձվորին,
Արեգակը աչք ե գցել
Թշիդ կարմիր խնձորին:

Արշալույսը վարդի թևով
Ցող ու շաղ ե ցած թափել,
Հասուն հասակը իր վառ սիրո
Անուշ յերգերն ե կապել:

Հովն ե վազում արտով հասուն
Մվսվում են հասկ ու արտ,
Ալիք-ալիք արտն ե հոսում,
Մերթ փոթորկոտ, մերթ հանդարտ:

Շող արևի լույս թևի տակ
Հունձ ենք անում հիմի մենք,
Կոկեկտիվի բերքը առատ
Խուրձ ենք անում հիմի մենք:

Իսկ դու քո վարդ դեմքը բացել,
Հաց ես բերում հնձվորին,
Արեգակը աչք ե գցել
Թշիդ կարմիր խնձորին:

ՄԻ ՄԱՆԿԱՆ

Ֆալիկս, մի հատիկ ես,
Մի հատիկ, խորոտիկ ես,
Ի՞նչ կանեմ վարդն ու լալեն,
Վարդի անուշ հոտիկ ես:

* * *

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽՐՃԻԹԻՆ:

Մեծ տաղանդի փոքրիկ տուն,
Կանգնիր առնացի,
Մեր սերունդներն են խնդուն,
Դալիս քեզ այցի:

Ձե՞ վոր ոջախում քո ջերմ,
Աշխարհից հեռու,
Ծնվեց պայծառ մի գիշեր,
Արևը լոռու:

Մեծ տաղանդի փոքրիկ տուն,
Կանգնիր առնացի,
Վոր սերունդները խնդուն
Միշտ գան քեզ այցի:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԱՆ ՄԵՋ

Սիրա իմ, այսոր խնդուն ես,
Ու խնդաս պիտի,
Ահա փոքրիկ այն տունը,
Մեր մեծ պոետի:

Ահա փոքրիկ այն տունը,
Վորտեղ նա աճեց,
Ու յերգերի ավյուհով
Դարեր նվաճեց:

Կանգնեց հզոր ու արի
Յերգերով լուսասեղ,
Ընկուղենուց վիթխարի
Պսակներ հյուսեց:

Ա՛խ, մի շեշտ կա հարազատ
Նրա յերգերում,
Վորպես պայծառ ու անմար
Արևը լոռու:

Վողջճւյն, վողջճւյն տնակին
Մեր մեծ պոետի,
Վողջճւյն վաղվա պոետին,
Վոր դեռ դա պիտի...

ՎԵՐՆՈՒՇ

1

Հոգիս այսոր իր հզոր թևերն ե պարզել
Յեվ սավառնում անվախ, և ճախրում ե հար,
Հոգիս առույգ ու կայտառ ջահել մի բազե,
Հղի մեր նոր որերի յերգով հողմավար:

Արարատյան արևը խնդուն և պայծառ
Վողողել ե իր լույսով թևերը հոգուս,
Հայացքիս դեմ աշխարհը լճյն ե ու անծայր,
Իմ աշխարհում կա և՛ սեր, և՛ խինդ և թե հույզ:

Նայիր, բացվում են անա խառ ու վարդազույն
Արշալույսները հոգուս և՛ պարզ, և՛ թե վառ,
Զգտումների բոցավառ կրակն իմ հոգում,
Ճանապարհ եմ ընկել յես տոկուն ու համառ:

2

Մտառը կյանքիս այս ծաղկուն, արևոտ որին,
Յերբ նոր կյանքն իր հաղթության փողն ե նվագում,
Յես վճնց, յես վճնց մոռանամ ծաղիկ Գիքորին,
Վոր թառամեց հին կյանքի խոնավ ծձակում:

Ահա աչերը նրա գունատ ու անուժ...

Ա՛խ, այդ անմեղ աչքերից թախիծն ե կաթում,

Ո՛ր, դու դաժան անցյալի ճ, արյունոտ հուշ,
Սիրտս անկեղծ տխրության սարսուռն ե պատում...

3

Յեղել ե ցուրտ մի ձմեռ, և՛ բուք, և՛ քամի,
Քամին սառած թևերով պատերն ե ծեծել,
Կանգնել ե նա քամու դեմ ձմռան ցուրտ ժամին,
Ու կանչել ե դողդրջուն—Եստի համեցե՞ք...

Զանին կանգնել ե տկուր կտուրի ծերին,
Գալուցի հետ են փոքրիկ ժիր ու դուրեկան,
Սպասել ե անհամբեր, վոր գիքորը գա,
Ու քաղաքից իր համար նոր շորեր բերի...

4

(Դարձիր, դարձիր, ճ, Գիքոր, վերադարձիր տուն,
Նանն ու Զանին աչքը ջուր սպասում են քեզ,
Դաժան ձմեռ ե իջել ու ձյուն ե թափում,
Հոգսերի բուքն ե անա դրսից հորդում ներս:

Ուրուր տեսած հավի պես և՛ թույլ և՛ յերեր,
Կուչ ե յեկել ու փլվել ձեր խրճիթը հին,
Սպասում են, վոր գնաս ուժով քո ջահել
Ու սյուն լինես ձեր փլչող, խարխուլ խրճիթին:

Խրճիթի մեջ սով ու սուգ, և՛ մահ, և՛ աճյուն...
Խրճիթի մեջ մանուկներ տկուր, անթի,
Խրճիթից դուրս ժամ առ ժամ վամպիրն ե աճում,
Մեջքին կապած վոսկեծալ, արնաշող գոտի...

— Դարձիր, դարձի, ճ, Գիքոր, վերադարձիր տուն,
Նանն ու Զանին անհամբեր քեզ են սպասում,

Դարձիր զենք ու զրահով և ուժով հատու
Յեզ հոգու մեջ թող յեռա վրեժդ հասուն...)

5

Բայց Գիքորը, Գիքորը, ախ, չկար արգեն...

Այն ռի, այն ռի սպանեց արեւը նրա...

Յերկրում ցուրտ էր ու ձմեռ, մառախուղ ու թեւ,
Ու ամպերն էյին ծանրացել աշխարհի վրա...

6

Քանի, քանի Գիքորներ Գիքորից բացի,
Թառամեցին անարեւ ու կյանքի կարոտ,
Քանի մայրեր ու քույրեր տխուր վողբացին
Նն վազամեռ ու ազիզ շիրիմների մոտ...

7

Մատաղ կյանքիս այս ծաղկման արևոտ ուրին,
Յերբ նոր կյանքն իր հաղթության փողն է նվազում,
Յես վաճեց, յես վաճեց մոռանամ ծաղիկ Գիքորին,
Վոր թառամեց հին կյանքի խոնավ ծմակում...

Ծ Ի Լ Ե Ր

Անծիր դաշտերի փռվածքի վրա
Դարունն իր ալվան, խաս գորգն ե հյուսել,
— Ո՛ր, նախիր, վորքան ծիւեր են բուսել
Անծիր դաշտերի փռվածքի վրա:

Դաշտերով մի զով զեփյուռն ե վազում
Պոկված լեռների թավշապատ լանջից,
Արևի վճիտ ու ջինջ ճաճանչից
Ձով զեփյուռնի տակ ծիւերն են նազում:

— Ո՛ր, ծիւեր, ծիւեր, ձեզ սեր, ձեզ բարե,
Ձեզ պայծառ արեւ, ձեզ կյանք, ձեզ զարուհ:
Ձե վոր դուք ձեր վառ հոգու ամբարում
Իմաստուն աճման խորհուրդն եք պահել:

Դուք կյանք եք մտնում մարտով մի համառ
Յեզ արեն ե վառ ձեր կրծքին շողում,
Իսկ զլիտեք արդյոք, վոր այս թուխ հոգում
Մեռան սերմերը ձեր աճման համար:

Ձեր սրտում հիմա կա մի ուժ ներքին,
Կա և՛ սեր և՛ մահ և՛ կյանքի բարձունք,
Այդ մահացման մեջ վաճ լաց, վաճ արցունք,
Այդ մահացման մեջ յերկունքն ե բերքի:

Վողջեւն ձեր բերքի արևոտ յերգին՝
Ձեր աճմանն համառ վողջեւն ո՛ր, վողջեւն,
Յես ել մի վսեմ մղումով ներքին,
Քայլում եմ առաջ, փոխվում ու աճում:

Ք Ա Ռ Յ Ա Կ Ն Ե Ր

ՄԵԾ ՍՏԱԼԻՆ

Խնչպես, վոր գարնան արևածագին
Իր աչքն ե բացում բողբոջը դալար
Պատուելով նազուկ զգեստն իր հագի
Ժպտում արևի շողին կենսարար,
Այդպես ել հիմա իմ բողբոջ հոգին
Զգալով իր մեջ շարժումը կյանքի,
Քո ջերմ արևի ճաճանչով աճել՝
Իր բերքն ե տալիս այս նոր աշխարհին՝

Արևի պես մշտավառ
Կյանք ես բաշխում ամենքին,
Բայց մնում ես անսպառ
Յեվ մեծ, և՛ պարզ և՛ մեկին:

Քեզ են ներբողում և վողջույն հղում
Սրտերը բոլոր յեղերքից — յեղերք,
Մեր ծովածավալ կյանքի ավերից
Բերում ենք քեզ խիստ և՛ լեռանդ և՛ յերգ:
Յես, թեև չնչին կաթիլն եմ ծովի,
Ծովից դուրս վռչինչ, ծովումն ամեն ինչ,
Յես ել եմ անա ձոնում քեզ այսոր
Հոգուս հույզերը և՛ պայծառ և՛ ջինջ:

Հոգուս աչքով դիտում եմ յես
Հայրենիքս ծաղկումն ալս պերճ,
Խինդն և հորդում իմ բորբ սրտում
Ու յես միտք եմ անում իմ մեջ՝
— Ո՞վ կտար մեզ կյանք արևկեզ
Ու աճման զարկն ալս աշխարհում,
Թե չծագեր Ստալինյան
Վառ արեգակն այս աշխարհում:

Իմաստուն ես, իմաստուն,
Ով Մեծանուն առաջնորդ,
Խոսքդ կտրուկ և ազդու,
Ով մեծանուն առաջնորդ:
Յերջանկավետ նոր կյանքի
Նոր վերելքի ու յերգի
Ուղիների լուսատու
Ով մեծանուն առաջնորդ:

Դու ասացիր պետք է լինել
 Համառ ու անկուն,
Յեվ կրակը հոգու խորքում
 Պահել բորբոքուն,
Ով առաջնորդ ամենատես
 Պատգամը քո մեծիմաստ,
Հուր տառերով գրել եմ յես
 Դրքումն իմ հոգու:

Հոգով իմ զվարթ, մտքով իմ արթուն
 Նայում եմ դեմքին յես այս Մեծ Մարդու,
Նրա աչքերի ամեն մի թարթում
 Հաղթանակների հույզեր եմ կարդում:
— Փառք քեզ վոր հոգուդ աչքերը պայծառ
 Լույս նպատակին պահած սեեռուն,
Մեր ժամանակի նավը անխորտակ
 Մղում ես կյանքի լուսակերտ հեռուն:

ԼԻՐԻԿԱ

ՄԻ ՄԱՆԿԱՆ

Ա՛խ այդ ինչ լավ անուշահոտ
Արևաշող բալիկ ես դու,
Ծով խնդություն, ծափ ու ծիծաղ
Ծակափթիթ բարիք ես դու,
Այն համ սիրտն ե, վոր չի հուզվում
Քո մշտավառ աչիկներից,
— Ձե վոր պա՛ծառ ու լուսագեղ
Յերջանկավետ գալիք ես դու:

*
* *

Այդ քո չքնաղ թարթիչներից
Յերբ ժպիտն ես կախում վար,
Կարծես հոգուս բողբոջներին
Շող ես մաղում վոսկեշաղ,
Ա՛խ, յես կյանքի, անուշ յերգի
Անկեղծ սրտի սիրահար,
Դու կյանք, դու յերգ, դու անկեղծ սիրա,
Յերջանկություն ու ծիծաղ:

Մ Ո Ր Ս

Ծաղիկ կյանքդ հոգսով մաշել
Ու անցել ես, մայր,
Վարդիդ սիրուն հազար ցավի
Դիմացել ես, մայր,
Քո փայփայած անուշ վարդը
Խորշակից հեռու,
Ծիլ արձակած բողբոջում ե
Իմացել ես, մայր...

*
* *

Միտքս իմ հույզի ղեկավարն ե քաջ,
Յեվ հույզս մտքիս քույրն ե հարազատ,
Այսպես թե-թեի գնում են առաջ
Անկաշկանդ, անվախ, խնդուն և ազատ:

*
* *

Հեղիկ շրշունով Մայիսն ե քալում
Արտերի վրա ու սեզ լեռների,
Հեղիկ շրշունով անձրևում ե նա
Իմ յերկրի մատաղ դալար ծիլերին,
Իմ յերկրի մատաղ դալար ծիլերին
Գոհար շիթերով համբույր ե հղում,
Ո՛ր, մեր ծիլերը հղի յեն, հղի
Բերքով մի պայծառ ու բազմաբեղուն:

*
* *

Անկիրք, անհույզ հանգիստ կյանքը
Սրտիս համար ո՛ր, խորթ ե միշտ,
Հոգիս կյանքի մըրիկներին,
Բաղխումներին հաղորդ ե միշտ,
Գիտեմ լես ել պիտի հանգչեմ,
Վորպես յերազ վաղվաղակի,
Բայց քանի կամ, համառ հոգիս
Մի վորոնող ճամբորդ ե միշտ:

*
* *

Քո մեջ, քո մեջ ամեն ինչ կա,
Յերկինք, յերկիր, տիեզերք,
Սիրո հուր կա, վարդի բույր կա,
Հազար խինդ կա, հազար յերգ,
Բայց ամենից չքնաղ ու վառ
Յեվ ամենից դուրեկան,
Գերում ե ինձ ժպիտը քո,
Հավերժորեն մանկական:

*
* *

Գեղեցիկ ես լուսնի պես
 լուսնի պես նազուք,
Լուսնի նման ցուրտ ու պաղ,
 Անկիրք, անհուզում,
Իմ սիրտն ինչպես սիրի քեզ,
 Հուզվի քեզանով,
Ֆերբ նա հավերժ բոցկլտում
 Արև ե ուզում:

*
* *

Գիշերն իջավ հովն անուշ,
Սարից փչեց զովն անուշ,
Շնգշնգացին հասկ ու արտ,
Հասած հասկի ծովն անուշ:

*
* *

Սերս ե յերգում հոգուս մեջ,
Թե՞ ծովն ե յերգում.
Սիրո ալիք կա անվերջ
Հոգուս ընդերքում:

*
* *

Վոնց վանդակից ազատ թողած մի թռչուն,
Թե՛ին տալով դեպի լեռներն ե թռչում,
Այդպես ել իմ ջահել սիրտը սիրակեզ,
Հուր կարոտով միշտ թռչում ե դեպի քեզ:

ՖԻՐԴՈՒՍՈՒՆ

Հին աշխարհի գորշ մշուշում
Վառ հոգիներ կան անմահ,
Ավանդ, կոխ են տվել փոշում
Շահերը պերճ ու ազահ,
Մենք ենք միայն, վոր մաքրելով
Նրանց փոշին շերտ առ շերտ
Լույս աշխարհ ենք հանում ահա
Հանճարներին լուսակերտ:

ՈՄԱՐ ԽԱՅԱՄԻՆ

— Դու առաջիր՝ «իմ աշխարքում
Քանի վոր կա մահ ու անկում,
Ել ինչո՞ւ յես տանջեմ հոգիս,
Ել ինչո՞ւ յես տքնեմ անքուն»,
— Ո՛ր մեծ խայամ, այս բարդ հարցում
Յես չեմ խփի թասս թասիդ,
Չե՞ վոր ձգտում, և նպատակ,
Յեվ լերջանիկ սեր կա կյանքում:

ՊՈՒՇԿԻՆԻՆ

* *

Պուշկինն այսօր վերածնվեց,
Աշխարհ չեկավ այսօր նորեն,
Բայց այս անգամ ավելի վեհ,
Յեւ ավելի պայծառորեն:

* *

Վորպես իր հսկա փերից հորդած
Անգուստ ովկիանի մի հախուռն ավիք,
Մռայլ ու դաժան անցյալից յելած,
Քայլում ես դեպի դարերը գալիք:

ԹՈՒՄ ԱՆՅԱՆԻՆ ՀԵՏ

ՅԵ՛Տ ԱՐԻ

*
* *

Արի պոետ, յետ արի,
Վորպես զուլալ գետ արի,
Ծաղկած Լոռուդ ձորերին,
Այցելության գեթ արի:

*
* *

Նրա ամեն մի տաղի,
Ամեն մի տողում,
Անմահության պանծալի—
Արեն ե շողշողում:

* *

Յերգդ արեւի հրի պէս ե,
Լոռու լեռնաղբբի պէս ե,
Անմահ սրտի ջերմ արյունով,
Պայծառ՝ գրած գրի պէս ե:

* *

Արյունարբու սև գահերի
Ու ցարերի արանքում,
Տանջվել ե մեր ժողովուրդը
Յեւ մաքառել աննկուն:
Դառնաթախիծ այն որերի,
Տանջանքներում չարաղետ,
Միահույսվեց յերգդ վճիռ
Տանջվող մարդու յերգի հետ:

«ԳԻՔՈՐԻ»-ԻՆ

«Գիքորի» մեջ խեղճ Գիքորի կարոտը կա,
Չոր ու անբերք հողն ու հերկը՝ արոտը կա,
Ու գազազած բաղազների աշխարհի դեմ,
Պայքարելու վառողը կա:

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Իմ հոգու համար մահը հաղթանար,
Իմ հոգին հավերժ չունի մահացում:
Ա.վ. Ի ս ա հ ա կ յ ա ն

Մահվան մասին վեճ բացվելիս ամեն ոք
Ինքս իմ մեջ միտք եմ անում յես մի պահ,
«Մահը վորքան անկարող ե և անզոր,
Յերբ վոր մարդու գործն ե հավերժ ու անմահ»:

* *

Են ջինջ աղբյուրն ե ուրախ, կարկաչուն,
Թե յերգէ ե սրտիդ արնով կարկաչում,
Ու սիրո՞ ծարավ ամեն անցորդի
Անհուն թուլանքով իրեն ե կանչում:

ԺՈՂ. ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՅԱՆԻՆ

ԻՄ ՅԵՐԳԸ ՆՐԱՆ

* *

Իմ յերգը նրան ով լքեց հավետ
Փալուն աստղերի խափուսիկ ուղին,
Յեվ նեխվող կյանքի գաղջ մղձավանջում
Իր սրտի կամքով կապվեց մայր հողին:
Նա վոր իր սրտի հույզերով վարար,
Լարերով անգին,
Ձուլվեց նոր կյանքի պայծառ ընթացքին
Տոկուն, անվարան,
Իմ յերգը նրան:

*
* *

Մեր դուռն ամենի քամին եր ծեծում,
Աշխարհն եր լցվել ահավոր մութով,
Իսկ դու հավատիդ անասան ուժով
Տեսար գալիքը, արևով լեցուն:

*
* *

Սիրում եմ յերգիդ թափն ու շոգին,
Կռվում աննահանջ քո վեհ հոգին,
Սիրում եմ յերգիդ չափը հնչյուն,
Մերթ շունդալից, մերթ կարկաչուն:
Քո մետաղակուռ սեգ քայլերդին
Ձայնակցել ե իմ դալար հոգին:

Ն. ՈՍՏՐՈՎՍԿՈՒՆ

«ԻՆՉՊԵՍ Ե ԿՈՓՎՈՒՄ ՊՈՂՊԱՏԸ»

Կարդալուց հետո

Ինչքան հույզեր, ինչքան կրակ
Ինչքան հուր կա այս գրքում,
Պայծառ կյանքի, յերջանկության
Ծաղկի բույր կա այս գրքում:
Բաշխումների բովում կոփվող
Պայքարատենչ մարտիկի,
Սիրակարոտ սրտից բղխող
Ջերմ համբույր կա այս գրքում:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Գ Յ Ո Թ Ե

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՅԵՐԳԸ

Անդորրն ե տիրել
Լեռան գագաթին,
Հավքերն են նիհրել
Անտառում մթին:
Հանգիստ են առել
Կատարները վեհ,
Սպասիր, դու յեղ,
Շուտով կնիհրես:

ԼԻԼԱՅԻՆ

Լիլա, Լիլա, տանջվում եմ
Մի անխնդում թախծով,
Յես մեռնում եմ, չես հանգչում եմ
Հոգու պայծառ իմ բոցով:

Բայց իզուր եմ սիրում ամբ, չես
Ինձ ծաղրում ես ծիծաղով,
Ծաղրելի, Լիլա, դու չքնաղ ես
Նաև անհույզ քո գեղով:

ՈՐ, ՎԱՐԴ ԱՂՋԻԿ

(Ազատ բարձր.)

Ո՛ր, վարդ աղջիկ, ո՛ր, վարդ աղջիկ շղթայված եմ
հիմա յես,
Բայց քո սիրո այդ շղթայից չեմ ամաչում վոչ
մի ուր,

Այդպես վարդի թփերի մոտ կարոտակեզ, սիրակեզ,
Անտառային յերգիչներին սոխակ արքան թեավոր
Հրաշագեղ հալսրտ վարդի թփումն ապրում եմ
միշտ

Սիրո անգին կապանքի մեջ մոռանալով հոգս ու
վիշտ,

Դիշերային խավարի մեջ անչափ քնքույշ, սիրահույզ,
Նա իր սերած վարդի համար յերգ եմ հյուսում
նրբահյուս:

ՎԱՐԴՆ ՈՒ ՍՈՒԱԿԸ

(Ազատ քաղաք.)

Լուսթյան մեջ այգիների գարնանային ու գեղուն,
 Վարդի վրա արևելյան հեգ սոխակն է գեղգեղում,
 Բայց նազելի վարդն այդ յերգով վնչ հուզվում է,
 վնչ շնչում,
 Միայն սիրո որհներգի տակ որորվում է ու ննջում:
 Արդյոք նույն կերպ դու չե՞ս յերգում գեղի համար
 պաղարյուն,
 Ո՛վ բանաստեղծ, ուշքի արի, հիմ համար ես քեզ
 լարում,
 Նա չի զգում, չի հասկանում բանաստեղծի վառ
 հոգին,
 Նա ծաղկում է, անարձագանք թողնում կանչդ
 կաթողին:

Ժ Ա Յ Ռ Ը

Վիթխարի լեռան փառահեղ ուսին
 Մի որ գեղերեց վոսկեղեն մի ամպ,
 Ու արթնանալով վաղ արշալույսին,
 Հեռացավ խաղով ու պարզ խնդությամբ:

Սակայն մեծ ժայռի դեմքի խոռոչում
 Թողեց վորպես հետք նա մի խոնավ ամպ,
 Իսկ ժայռը մենակ տխուր հառաչում,
 Ու արտասվում է խոհուն տրտմությամբ:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. Բողոքը	3
2. Պատասխանը	5
3. Մ. Նալբանդյանին	6
4. Արծաթավալս գեղեցկուհին	7
5. Զորատեսի Մայիս	9
6. Ներբող հերոս սղաչուններին	10
7. Լիրիկա	12
8. Արթիկ Տուֆում	13
9. Արթիկ—տուֆի հարվածայիններին	14
10. Շենքերի և բանվոր ընկերներին քննադատության մասին	15

Ս Ե Վ Ա Ն

11. Սեվանա լճին	19
12. Լիրիկա	20
13. Ամպն ու ալիքը	21
14. Ծովափին	22
15. Հասկի աճումը	23
16. Ամռան առավոտ	24
17. Ամառ	25
18. Պատվավոր հյուրը	26
19. Ամռան արեն իր պայծառ արժագով	27
20. Մեր և կարոտ	28
21. Հասունացում	30
22. Որորոցի մոտ	31

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ

23. Կոլոսզի աղջիկ	33
24. Հնձվորի սերը	34
25. Մի մանկան	35
26. Թուժանյանի խրճիթին	36
27. Թուժանյանի տան մեջ	37
28. Վերհուշ	38
29. Միլեր	41

Ք Ա Ռ Յ Ա Կ Ն Ե Ր

Մ Ե Մ Ս Ս Ա Լ Ի Ն Ի Ն

30. Ինչպես, Վոր դարնան արևածագին	45
31. Արևի պես մշտավառ	46
32. Քեզ են ներբողում	47
33. Հոգու աչքերով	48
34. Իմաստուն ես, իմաստուն	49
35. Դու ասացիր	50
36. Հոգով իմ գլարթ	51

Լ Ի Ր Ի Կ Ա

37. Մի մանկան	55
38. Այդ քո չքնաղ թարթիչներին	56
39. Մորս	57
40. Միտքս իմ հույզի ղեկավարն ե քաջ	58
41. Հեղիկ շրշունով	59
42. Անկիրք, անհույզ կյանքը	60
43. Քո մեջ, քո մեջ ամեն ինչ կա	61
44. Գեղեցիկ ես լույսնի պես	62
45. Գիշերն իջավ հովն անուշ	63
46. Սերս ե յերգում սրտիս մեջ	64
47. Վոնց վանդակից ազատ թողած մի թռչուն	65

Մ Ե Մ Ե Ր Ի Ա Շ Խ Ա Ր Հ ՈՒ Մ

48. Ֆիրդուսուն	66
49. Ոմար Պայամրն	67
50. Պուշկինին (Պուշկինն այսոր վերածնվեց)	68
51. Վորպես իր հսկա ափերից հորդած	69

Թ ՈՒ Մ Ա Ն Յ Ա Ն Ի Հ Ե Տ

52. Յես արի	70
53. Նրա ամեն մի տաղի	71
54. Յերգը արևի հրի պես ե	72
55. Արյուն արբու սև դահերի	73
56. Վերբորին	74

Ա Վ. Ի Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Ի Ն

57. Մահվան մասին վիճ բացվելիս ամեն որ	75
58. Են ջինջ աղբյուրն ե	76

Ժ Ո Ղ. Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Հ Ա Կ Ո Ր Հ Ա Մ Կ Ո Ր Յ Ա Ն Ի Ն

59. Իմ յերգը նրան	77
60. Մեր դուռն ամենի քամին եր ծեծում	78
61. Սըրում յերգից թափն ու շողին	79
62. Ն. Ուսարովսկուն	80

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Փ Ո Ր Ձ Ե Ր

63. Գ յ ո թ ե - Թափառաշրջիկի գիշերային յերգը	81
64. Պ ու շ կ ի ն Լիլային	82
65. Պ ու շ կ ի ն Ո՛ւ, վարդ աղջիկ	83
66. Պ ու շ կ ի ն Վարդն ու սոխակը	84
67. Լ ե Ր մ ո ն ա ո վ Ժայռը	85

4084

Հրատ. 4193, Գլ. լիազ. №—0209, Պատվ. 066, Տիրած 2000

Պետհրատի տպարան, Յեքեան, Լենինի փողոց 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0342891

9117. 2 11

36568

ՄԻՐՏԻՉ ԿՐՅՈՒՆ.
„ՔԵՏՆԻ ՋԻԶՆԻ և ԼՅՈՒԲՆԵՐԻ“
ԴԻԶ ԱՐՄ.Ս.Ս.Ր. ԵՐԵՎԱՆ